ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԵԶ ՀՈՒՇՈՒՄ ԵՆ...

Առաջադրանքներ

1. *Անտառ*, *ծաղիկ*, *երկու* բաղադրիչներով համադրական բառեր կազմիր:

2. Բաղադրիչների միացումով կազմիր բարդածանցավոր բառեր:

Հյուր + *սեր* + *ություն*, *սուտ* + *մեռ* + *ուկ*, *բառ* + *գետ* + *ություն*, *մայր* + *քաղաք* + *ային*, *մարդ* + *սեր* + *ություն*, *մեջ* + *օր* + *ե*:

3. Հետևյալ վերջածանցներով և արմատներով (նաև բառերի արմատներով) կազմիր բառեր՝ հնարավոր բոլոր ձևերով:

– ալի, –անք, –ություն:

Տրտում, նողկալ, իղձ, խինդ, բերկրել, քնքուշ, ցնծալ, ցանկանալ:

Նմուշ՝ տրտմալի, տրտմանք, տրտմություն:

4. Լրացո՛ւ բաց թողնված տառերը և դո՛ւրս գրիր բարդ և ածանցավոր բառերը:

Հազարաթույր ծաղիկները պճնազար_ել էին բուրաստաննեը, երազանման թիթե_ների բույլերը ճախրում էին փար_ամ ու զմրու_տաշող կանաչների մեջ՝ անսահման հաճույք պատճառելով դիտողին: Արմավենիները, թզենիները պ_ռանքով բոլորել էին ականակի_ լճակների շուրջը: Դրանցում ցոլացայտ ձկներ էին խայ_ում: Անու_ջների պես հմայելով՝ բուրումնավետ օդում թռչկոտում էին դրա_տային հավքերը, և նրանց հո_եհմա երգերի դայլայլները կախարդում էին ունկնդրին: Ծանրասաղար_ ծառերից կախված էին պտուղները՝ թուզը, արմավը և սերկ_իլը: Թվում էր՝ բնությունը ցանկանում էր զարմացնել իր շռայլությամբ: Լեռները լռելյայն կախարդվել էին, մթ_կա ձորերը՝ պապան_վել: